Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

Շաբաթական Զեկույց

04 Փետրվար 2013

Ֆինանսական շուկաների,

տեղեկատվության հասկացում և վերլուծություններ

գիտակցված ներդրումների համար

Ձեզ ենք ներկայացնում TeleTRADE Հայաստանի շաբաթական զեկույցների երկրորդ հատորի հինգերորդ հրապարակումը՝ առաջարկելով միջազգային շուկայական միտումների և ֆինանսատնտեսական զարգացումների բազմակողմանի վերլուծություն՝ կենտրոնանալով Հայաստանի վրա, սակայն անդրադառնալով նաև համաշխարհային շուկայական միտումներին և զարգացումներին ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ասիայում:

Ձեր ուշադրությանը ներկայացնում ենք՝

- 2012թ. չորրորդ քառորդում ԱՄՆ-ի ՀՆԱ-ն անսպասելիորեն նվազեց՝ ցուցադրելով մարգինալ 0,1 տոկոս տարեկան աճ, ինչը ՀՆԱ-ի ամենավատ արդյունքն է հանդիսանում 2009թ. երկրորդ քառորդից: 2012թ. տարեկան ՀՆԱ-ն աճեց 2,2 տոկոսով՝հաջորդելով 2011թ. 1,8 տոկոս աճին: Գործազրկությունը բարելավվեց, սակայն, դանդաղ տեմպերով, քանզի ամսվա ընթացքում նոր աշխատատեղերի քանակը զիջում էր նախորդ ամսվա ցուցանիշներին: Տնտեսությունը խթանեցին շինարարության և տների բարելավված շուկաները: Ներդրողների վստահության ամրապնդումը ևս աջակցեց կապիտալի շուկայի աճին: Dow Jones-ը հաղթահարեց 14,000 մակարդակը առաջին անգամ 2007թ. հոկտեմբերից:

- Եվրոպայում հայտնվեցին տնտեսական վերականգնման նոր նախանշաններ, քանզի գործազրկության մակարդակը Գերմանիայում նվազեց, իսկ գործարար վստահությունը աճեց: Սրա արդյունքում եվրոն 2011թ. առաջին անգամ գնահատվեց 1,35 դոլար;

- Համաձայն նորացված տվյալների՝ 2012թ. Հայաստանի տնտեսությունը աչեց 7,2 տոկոսով՝ ներառելով աճ գյուղատնտեսության, արդյունաբերական արտադրանքի և շինարարության ոլորտներում: Հայաստանի ընդհանուր ապրանքաշրջանառությունը աճեցին՝ արտահանումներն ու ներմուծումները ավելացան, որի հետ մեկտեղ ավելացվեց նաև ամսական միջին աշխատավարձը:

Ամերիկյան տնտեսությունը խառը ցուցանիշներ է ցուցադրում՝

Համաձայն անցած շաբաթ հրապարակված տվյալների՝ իրավիճակը գործազրկության բնագավառում բարելավվեց, սակայն կարգավորումը դանդաղ է ընթանում, քանզի 2013թ. հունվարին ստեղծվել է 157,000 նոր աշխատատեղ, ինչը զիջում է 2012թ. դեկտեմբերի 196,000 մակարդակին և նշանակալի անկում է հանդիսանում 2012թ. հուվարի 311,000 նոր աշխատատեղերի մակարդակից: Հունվար ամսին ունենալով 7,9 տոկոս գործազրկության մակարդակ, կամ 12,3 միլիոն ամերիկացիներ առանց աշխատանքի՝ կանխատեսվում է, որ 2013 գործազրկությունը մի փոքր կնվազի մինչև 7,5 տոկոս, որին կնպաստեն շինարարական ավելի ուժեղ հատվածը, ինչպես նաև վերալանգնված տների շուկան (Տես գրաֆիկը): Վերջին տվյալները հաստատում են սա, քանզի սեփական տների շինարարությունը աճեց 15,3 տոկոսով, ինչը նշանակում է , որ 2012 տնային շինարարության համեմատ գրանցվել է 11,9 տոկոսանոց աճ՝ հանդիսանալով հատվածի լավագույն ցուցանիշները 1992թ-ից: Ներդրողների վստահության ամրապնդումը ևս աջակցեց կապիտալի շուկայի աճին: Dow Jones-ը հաղթահարեց 14,000 մակարդակը առաջին անգամ 2007թ. հոկտեմբերից:

ԱՄՆ գործազրկություն՝ նոր աշխատատեղեր (հազարներ)



Աղբյուր՝ US Bureau of Labor Statistics

Վերջերս հրապարակված տվյալների համաձայն՝ 2012թ. չորրորդ քառորդում ամերիկյան տնտեսությունը անսպասելիորեն կրճատվեց, քանզի գրանցվեց ՀՆԱ-ի տարեկան 0,1 տոկոս մարգինալ աճ: Վիճակագրական տվյալների համաձայն 2009թ. երկրորդ քառորդից հետո ՀՆԱ-ի քառորդային ամենավատ արդյունքը կապված էր վերջին քառասուն տարում պաշտպանության ծախսերի խոշորագույն նվազման հետ: Մասնավորապես, սպառողական ծախսերը, որը հանդիսանում է ամբողջ տնտեսական ակտիվության 70 տոկոսը, անցած քառորդում գրանցեց տարեկան 2,2 տոկոսանոց աճ՝ անցած երեք քառորդների 1,6 տոկոսի համեմատ: Սա ներառեց երկարաժամկետ ապրանքների ձեռքբերումը, ընդգրկելով ավտոմեքենաները՝ աճելով 13.9 տոկոսով, ինչը վերջին երկու տարիների բարձրագույն մակարդակն է:

2012թ. տարեկան ՀՆԱ-ն աճեց 2,2 տոկոսո՝ հաջորդելով 2011թ. 1,8 տոկոս աճին: Վերլուծելով, սակայն, 2012թ. չորրորդ քառորդում ՀՆԱ-ի անկումը, պարզ է դառնում, որ ամենաէական ասպեկտը կապված է անձնական սպառողական ծախսերի 2.2 տոկոս աճի հետ, որը աճել է երրորդ քառորդի 1.6 տոկոսի համեմատ, ինչպես նաև սեփական տների ներդրումների հետ, որոնք տարեկան հաշվարկով աճեցին 15.3 տոկոսով երրորդ քառորդի 13.5 տոկոս մակարդակից՝ հանդիսանալով ՀՆԱ-ի դրական խթան յոթերորդ քառորդն անընդմեջ (Տե՛ս գրաֆիկը):

Ներդրումային նպաստը իրական ՀՆԱ-ին՝ 1976-2014թթ.
(տոկոսային փոփոխություն; երեք քառորդ կենտրոնացվված միջին)



Աղբյուր՝ www.calculatedriskblog.com

Թեպետ ներդրումները բնակարանաշինության մեջ դրական խթան էին հանդիսանում ՀՆԱ-ի աճի համար վերջին յոթ քառորդներում, այն չեզոքացվեց պետական և տեղական կառավարությունների ծախսերի կրճատմամբ (Տե՛ս գրաֆիկը):

Իրական ՀՆԱ-ում տոկոսային փոփոխության նպաստը (2005-2013)



Աղբյուր՝ www.calculatedriskblog.com

Համաշխարհային տնտեսություն՝

Այս ընթացքում շարունակվում էին ի հայտ գալ համաշխարհային տնտեսության ամրապնդման նախանշաններ՝ պայմանավորված Չինաստանի տնտեսության ավելի մեծ աճով, որը արագացավ չորրորդ քառորում առաջին անգամ վերջին երկու տարիների ընթացքում՝ մեծացնելով ավելի լավ տարածաշրջանային բարելավման հեռանկարները: Համաշխարհային բանկը նոր կանխատեսումներ հրապարակեց, համաձայն որի՝ 2013թ. զարգացող երկրները կունենան 5.5 տոկոս տնտեսական աճ, որը աճի ավելի բարձր մակարդակ է, քան 2012թ.:

Հեռանկարը եվրոպայի համար՝

Եվրոպայում նկատվում էին տնտեսական վերականգնման նախանշաններ, քանզի ինչպես սպառողական, այնպես էլ գործարար վստահության հունվարին հասան իրենց 7-ամսյա բարձրագույն մակարդակներին: Ավելի մեծ վստահությունը ամրապնդեց նաև եվրոյի արժեքը, որը 2011թ. առաջին անգամ աճեց մինչև 1.35 դոլար մակարդակը: Այնուամենայնիվ, Իսպանիայի տնտեսության հեռանկարը շարունակում է թույլ մնալ՝ սխառնալով դանդաղեցնել եվրոզոնայի վերականգնումը, քանզի Իսպանիան շարունակում է ճգնաժամմի մեջ գտնվել: Եվրոպական Կենտրոնական Բանկի համաձայն՝ կանխատեսվում է, որ այս տարի եվրոզոնայի ընդհանուր տնտեսությունը կկրճատվի 0,2 տոկոսով, որից հետո 2014թ. կգրանցի 1,2 տոկոսանոց աճ: Կանխատեսվում է նաև 2012թ. նոյեմբերին գրանցված գործազրկության ռեկորդային 11,8 տոկոսը կաճի մինչև 11,9 տոկոս: Միաժամանակ դրական զարգացումներ գրանցվեցին գերմանական տնտեսության մեջ, երբ անցած ամիս Գերմանիայի գործազրկությունը անսպասելիորեն կրճատվեց:

Հայացք Ասիային՝

Ասիայում՝ Չինաստանում, 2012թ. երրորդ տարին անընդմեջ գյուղական համայնքների եկամուտը ավելի արագ էր աճում, քան քաղաքաբնակների եկամուտը, քանզի գաղթած աշխատուժը ավելի բարձր աշխատավարձ էր ստանում, իսկ Չինաստանի կառավարությունը ամրապնդել էր սոցիալական ապահովության ցանցը: Թայվանական տնտեսությունը նույնպես 2012թ. ցուցադրեց 5,7 տոկոսանոց աճ, ինչը պայմանավորված էր թայվանական արտադրության հատվածի ամրապնդմամբ, տեղական ավելի մեծ սպասմամբ և արտահանման աճող ծավալներով:

Համաշխարհային ապրանքային շուկա՝

Այս ընթացքում քներգակիրների գները ընդհանուր առմամբ շարունակում էին աճել: 2013թ. հուվարին հում նավթի գները աճեցին ավելի, քան 4 տոկոսով՝ այժմ գնահատվելով 100 դոլար բարելի դիմաց: Միաժամանակ, ԱՄՆ-ում բենզինի ֆյուչերսները նույնիսկ ավելի շատ աճեցին՝ անցած ամիս աճելով 8 տոկոսով՝ (Տե՛ս գրաֆիկը): Բնական գազի գները, այնուամենայնիվ, որը օգտագործվում է մեծամասամբ տների ջեռուցման նպատակով, տատանվեց եղանակային փոփոխությունների պատճառով, սակայն 2013թ. հունվարին նվազեց 4 տոկոսով:

ԱՄՆ բենզինի գները



Աղբյուր՝ AAA

Հայաստանյան իրադարձություններ՝

Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության անցած շաբաթ հրապարակած տվյալների՝ 2012թ. Հայաստանի տնտեսությունը անցյալ տարի աճեց 7,2 տոկոսով՝ ներառելով 9,5 տոկոս աճ գյուղատնտեսության հատվածում, 8,8 տոկոս աճ արդյունաբերական արտադրանքում, ինչպես նաև չնչին 0,2 տոկոս աճ շինարարական հատվածում: Վերանայված տվյալները ընդգրկում են նաև առևտրի մասին տվյալներ, որոնք երկրի ընդհանուր առևտրի ծավալներում ցուցադրեցին 3,6 տոկոսանոց աճ: Արտահանումները ավելացան 7 տոկոսով, իսկ ներմուծումները՝ 2,9:

Անցյալ տարի սպասարկման ոլորտը ցուցադրեց 10,8 տոկոսանոց աճ, իսկ միջին ամսեկան աշխատավարձերը, ըստ տվյալների՝ աչեց 5,1 տոկոսով: 4,3 տոկոսով աճեցին հանրային հատվածի աշխատավարձերը, իսկ մասնավոր հատվածում ամսեկան միջին աշխատավարձերը աճեցին 5,5 տոկոսով:

Անցած շաբաթ արված հայտարարության մեջ Հայաստանի Էներգետիկայի նախարար Արեն Մովսիսյանը նշեց, որ Ռուսաստանից Հայաստան ներմուծվող բնական գազի գնի վերաբերյալ բանակցությունները թևակոխել են «վերջնական փուլ»: Կանխատեսվում է, որ ռուսական գազային հսկա Գազպրոմի հետ ընթացող բանակցությունները կավարտեն ռուսական գազի գնի էական աճով, թեպետ երկու կողմերն էլ կարծես հակված են սպասել մինչև փետրվարի 18-ին կայանալիք Հայաստանի նախագահական ընտրությունները նոր գինը հայտարարելուց առաջ:

Այս վարկածը հաստատվում է նաև Հայաստանի մաքսային ծառայության տվյալնելով, որոնք հերքեցին Հայաստանի կառավարության պաշտոնական պնդումները, թե իբր Հայաստանի ռուսական գազի հազար կուբամետրի դիմաց վճարում է 180 դոլար: Մասնավորապես, մաքսային տվյալները ցուցադրում նեն, որ Հայաստանը ներմուծել է 304,6 միլիոն կուբամետր ռուսական գազ, որի դիմաց 2012թ. երրորդ քառորդում վճարել է 74,4 միլիոն դոլար: սա նշանակում է, որ հազար կուբամետրի դիմաց վճարվել է մոտ 244 դոլար:

-Ռիչարդ Գիրագոսյան և Ռոբերտ Ղազինյան

Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

TeleTRADE-ը FOREX շուկայի հիմնական խաղացողներից է և տիրապետում է աշխարհում ամենալայն ներկայացուցչական ցանցին՝ աշխարհի 20 երկրներում ունենալով 150 գրասենյակներ: Հիմնադրված լինելով 1994 թ.՝ TeleTRADE-ը ճանաչված առաջամարտիկ է խորհրդատվական և միջազգային ֆինանսական շուկաներում ծառայությունների մատուցման բնագավառում:

Տարածաշրջանային Հետազոտությունների Կենտրոնը (ՏՀԿ) անկախ, շահույթ չհետապնդող հետազոտական կենտրոն է, որն առաջարկում է լայնամասշտաբ ռազմավարական վերլուծություններ և անկողմնակալ հետազոտություններ, ինչպես նաև իրականացնում է մի շարք կրթական և քաղաքականության հետ առնչվող ծրագրեր: Որպես Հայաստանում առաջատար հետազոտական կենտրոն՝ ՏՀԿ-ն իրականացնում է հետազոտություններ և վերլուծություններ, ինչպես նաև զարգացնում է քաղաքական նախաձեռնություններ՝ ուղղված քաղաքական և տնտեսական բարեփոխումների խթանմանը և Հարավային Կովկասում հակամարտությունների կարգավորմանը: